ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» --------- 2020թ. **N----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 27-րդ հոդվածով և 67-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել Երևանի ենթակայության հետևյալ փակ բաժնետիրական ընկերությունները՝

1) «Աջափնյակ Կանաչապատում» փակ բաժնետիրական ընկերություն (գտնվելու վայրը՝ 0078, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Ա.Սարգսյան հ.5, պետական գրանցման համարը՝ 271.120.747807),

2) «Ավան-Կանաչապատում» փակ բաժնետիրական ընկերություն (գտնվելու վայրը՝ 0060, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Խուդյակով հ.222, պետական գրանցման համարը՝ 282.120.02673),

3) Արաբկիր համայնքի «Արաբկիր-Կամար» փակ բաժնետիրական ընկերություն (գտնվելու վայրը՝ 0051, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Արաբկիր 27, պետական գրանցման համարը՝ 264.120.03677),

4) «Դավթաշենի Կանաչապատում» փակ բաժնետիրական ընկերություն (գտնվելու վայրը՝ 0054, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ. հ.2, պետական գրանցման համարը՝ 271.120.02004),

5) Էրեբունի թաղային համայնքի «Վարդավառ զբոսայգի» փակ բաժնետիրական ընկերություն (գտնվելու վայրը՝ 0008, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ս. Դավթի հ. 87, պետական գրանցման համարը՝ 278.120.02709),

6) «Կենտրոն-Կանաչապատում» փակ բաժնետիրական ընկերություն (գտնվելու վայրը՝ 0001, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Տերյան հ. 44, պետական գրանցման համարը՝ 273.120.03405),

7) «Նոր Նորք Կանաչապատում» փակ բաժնետիրական ընկերություն (գտնվելու վայրը՝ 0089, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Թևոսյան հ.104, պետական գրանցման համարը՝ 282.120.02763),

8) «Նուբարաշեն» փակ բաժնետիրական ընկերություն (գտնվելու վայրը՝ 0071, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Նուբարաշեն 9-րդ փող. հ. 4, պետական գրանցման համարը՝ 278.120.02232),

9) Երևանի Նորք-Մարաշ թաղային համայնքի «Կանաչ Բարձրունք» փակ բաժնետիրական ընկերություն (գտնվելու վայրը՝ 0047, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ամառանոցային հ.272, պետական գրանցման համարը՝ 273.120.02020),

10) «Շենգավիթ-Կանաչապատում» փակ բաժնետիրական ընկերություն (գտնվելու վայրը՝ 0026, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Գ.Նժդեհի հ.26, պետական գրանցման համարը՝ 269.120.03073),

11) «Քանաքեռ-Զեյթուն Բարեկարգում» փակ բաժնետիրական ընկերություն (գտնվելու վայրը՝ 0014, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Դ.Անհաղթի հ.11, պետական գրանցման համարը՝ 264.120.07417):

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 7-օրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՓԱԿ ԲԱՅՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի ենթակայության մի շարք փակ բաժնետիրական ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություններ) միակ բաժնետերը հանդիսանում է Երևան համայնքը, որին 100%-ով պատկանում են Ընկերությունների բաժնետոմսերը, իսկ Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի N193-Ն որոշմամբ՝ կառավարման լիազորությունները պատվիրակված են Երևանի վարչական շրջանների ղեկավարներին:

«Երևանի ենթակայության մի շարք փակ բաժնետիրական ընկերություններ լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է նրանով, որ 2019 թվականի դեկտեմբերի 16-ի N163-Ա որոշմամբ ստեղծվել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը, որը կենտրոնացնելու է կանաչապատման աշխատանքների համար քաղաքապետարանի կողմից տրամադրվող գումարները, դրանց տնօրինումը, իսկ Երևան քաղաքի կանաչապատման աշխատանքները քաղաքի համար կիրականացվեն նոր համալիր լուծումներով և միասնական մոտեցմամբ:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ Ընկերությունների հետագա գործունեությունը դառնում է ոչ նպատակահարմար:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևանի ենթակայության մի շարք փակ բաժնետիրական ընկերություններ լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՓԱԿ ԲԱՃՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի ենթակայության մի շարք փակ բաժնետիրական ընկերություններ լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ այլ իրավական ակտերում փոփոխություններ և (կամ) լրացումների կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՓԱԿ ԲԱՃՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի ենթակայության մի շարք փակ բաժնետիրական ընկերություններ լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման արդյունքում Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ